ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը
Արմեն Ղազարյան

2. Զբաղեցրած պաշտոնը
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները
Վիեննա, Ավստրիա, 2019թ. նոյեմբերի 20-22–ը

4. Հրավիրող կողմը
Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոն - ՄՔԶՄԿ

5. Գործուղման նպատակը
Մասնակցել Վիեննայի միգրացիոն կոնֆերանսին (VMC)

6. Քննարկված թեմաները
Կոնֆերանսի առաջին օրը քննարկվել է ԵՄ միգրացիոն քաղաքականության հիմնական ուղղությունները: Անդրադարձներ են կատարվել ԵՄ նոր հանձնաժողովի կողմից ուրվագծված միգրացիոն քաղաքականության հիմնական դրույթներին և այս առնչությամբ հնարավոր առաջարկությունների մշակմանը: Քննարկմանը մասնակցում էին Հունգարիայի, Մալթայի արտաքին գործերի նախարարները, Հունաստանի միգրացիայի և քաղաքացիների պաշտպանության նախարարը, Պորտուգալիայի միգրացիայի և ինտեգրացիայի հարցերով պետքարտուղարը, Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակի գործադիր տնօրենը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը
Բացի կոնֆերանսին մասնակցությանը, ՄԾ պետը և վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալը Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակի ներկայացուցիչների հետ քննարկել են Հայաստանում ապաստանի համակարգին հնարավոր աջակցությունը, Նիդերլանդների արդարադատության և անվտանգության նախարարության ներկայացուցչի հետ՝ վերադարձի ոլորտում համագործակցության հեռանկարները, ինչպես նաև ՄՔԶՄԿ ներկայացուցիչների հետ՝ ընթացիկ համագործակցությանն ու հնարավոր նոր համատեղ ծրագրերին առնչվող հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ապաստանի աջակցման եվրոպական ծառայության գործադիր տնօրենի գլխավոր խորհրդականի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանում ապաստանի օրենսդրական բազայի վերանայման հարցում մասնագիտական և կարողությունների զարգացման օժանդակցության ցուցաբերման առնչությամբ, մասնավորապես դիտարկվել է մասնագիտական փոխանակումների և դասընթացների կազմակերպման հնարավորությունը: Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ծառայության /ERRIN/ ներկայացուցչի հետ քննարկվել է Հայաստանում ԵՄ-ից վերադարձած քաղաքացիների օժանդակության ծրագրի շարունակականության հնարավորությունը (ծրագիրն ավարտվելու է 2020թ-ին): ERRIN-ի ներկաացուցիչը շեշտել է ԵՄ անդամ պետություններից օժանդակության տրամադրման դեպքում ծրագիրը շարունակելու իրենց պատրաստակամությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկներ՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Անհրաժեշտ ենք համարում Ապաստանի աջակցման եվրոպական կենտրոնի հետ համագործակցության ընդլայնումը, ինչը կնպաստի Հայաստանում ապաստանի համակարգի ինչպես օրենսդրական բազայի բարեփոխմանը, այնպես էլ կարողությունների զարգացմանը:

10.Ստորագրությունը, ամսաթիվը

/Արմեն Ղազարյան / *27.11.2019թ.*